02 Շաբաթաթերթ

Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

23 (1422) • 21 հունիսի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

Շնորհավո՛ր տոնդ, Ոստիկանության զորքեր

27 տարի առաջ՝ 1992 թ. հունիսի 21-ին, ներքին գործերի համակարգում ստեղծվեց ներքին զորքերը: Ստեղծման առաջին իսկ օրից ներքին զորքերը ձեռնամուխ եղավ ոչ միայն իր հիմնական խնդիրների կատարմանը՝ պաշտպանել մարդու իրավունքներն ու ազատությունները հանցավոր, հակահասարակական ոտնձգություններից, ապահովել պետության եւ հասարակության անվտանգությունը, այլեւ ակտիվորեն մասնակցել մեր հայրենիքի սահմանների եւ Արցախի պաշտպանության գործողություններին:

Ներքին զորքերի ծառայողները մարտական մկրտություն ստացան ռազմաճակատի ամենաթեժ, ռազմավարական նշանակության կարեւոր կետերում: Զորքերի հերոսական ուղին սկսվեց Գորիսի շրջանի Խոզնավար եւ Ծուռնուխ գյուղերից, ապա Մեղրի, Վարդենիս, Նոյեմբերյան, հետո հաղթարշավը հասավ Լեռնային Ղարաբաղ...

Ոստիկանության զորքերի ավելի քան հարյուր զինծառայողներ պարգեւատրվել են պետական բարձր պարգեւներով, որոնցից հիսունութը՝ հետմահու:

Ոստիկանության զորքերը մեր երկրի համար բարդ ու տագնապալի ժամանակաշրջանում պատվով կատարեց իր խնդիրը, պատերազմում ու հանցավոր աշխարհի դեմ պայքարում կերտեց իր հաղթական կենսագրությունը:

Հավատարիմ իր պարտքին եւ առաքելությանը՝ Ոստիկանության զորքերն այսօր ոչ միայն շարունակում է պաշտպանել երկրի ներքին կայունությունն ու հասարակական կարգը, այլեւ երկրի սահմանների անվտանգությունը:

Հայրենասիրություն, պրոֆեսիոնալիզմ, նվիրում պետության ու ժողովրդի անվտանգության պաշտպանությանը՝ սա է Հայրենիքի պահանջը Ոստիկանության զորքերից, սա է Ոստիկանության զորքերի առաքելությունը:

Շնորհավո՛ր տոնդ, Ոստիկանության զորքեր:

Աշխատանքային խորհրդակցություն

Հունիսի 15-ին ոստիկանությունում աշխատանքային խորհրդակցություն եւ պարգեւատրման հանդիսավոր արարողություն էր: ՀՀ ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանից «Համագործակցության ամրապնդման համար» մեդալը ստացողն այն քաղաքացին էր, որն օգնել էր Նոր Նորքի բանկերից մեկի պահպանությունն իրականացրած եւ զինված հանցագործին վնասազերծած ոստիկանին: Ոստիկանության պետը նրան շնորհակալություն հայտնեց խիզախության համար ու հույս հայտնեց, որ օրինակը լավ իմաստով վարակիչ կլինի՝ հատուկ շեշտելով՝ արարքը հասարակություն-ոստիկանություն կապի ամրապնդման լավագույն դրվագներից է: Պարգեւատրվեց նաեւ զինված տղամարդուն վնասազերծած պետական պահպանության գլխավոր վարչության ծառայողը: Վալերիյ Օսիպյանի հրամանով նրան շնորհվել է «Ոստիկանությունում գերազանց ծառայության» կրծքանշան: Պարգեւատրվեցին նաեւ հանցագործությունների բացահայտման գործում ավանդ ներդրած ծառայողները:

Մար, առանձնապես ծանր հանցագործություններ բացահայտած, ինչպես եւ կյանքեր փրկած ոստիկաններն արժանացան դրամական պարգեւների: Մրարներում նշված էին ծառայողի բացահայտած հանցագործության տեսակն ու պարգեւավճարի չափը: Գումարները կփոխանցվեն նրանց հաշվեհամարներին:

«Մենք պատրաստ ենք առանց սահմանափակման լրացուցիչ պարգեւավճարներ հանձնել ծանր, առանձնապես ծանր, ինչպես եւ հասարակական հնչողություն ստացած հանցագործությունները բացահայտած ծառայողներին»,- շնորհավորելով պարգեւատրվածներին՝ նշեց Վալերիյ Օսիպյանը:

էջ 2

Սպանության համար հետախուզվողը հայտնաբերվեց

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչությունում օպերատիվ տվյալներ էին ստացվել սպանության մեղադրանքով հետախուզվողի թաքնվելու վայրի վերաբերյալ: Տեղեկությունների հիման վրա ձեռնարկվեցին տարաբնույթ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ համագործակցելով ոստիկանության էրեբունու, Թումանյանի եւ այլ բաժինների ծառայողների հետ:

Ոստիկանների հետեւողական ու ճշգրիտ գործողությունների շնորհիվ հունիսի 14-ին Լոռու մարզի Շամլուղ գյուղում հայտնաբերվեց ոստիկանության էրեբունու բաժնի կողմից սպանության մեղադրանքով հետախուզվող երիտասարդը:

Հիշեցնենք, որ հունիսի 10-ին Երեւանի Տիգրան Մեծի պողոտայում կենցաղային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ընթացքում բերման ենթարկված երիտասարդը դանակահարել էր 63 եւ 24-ամյա անձանց: Նրանցից ավագը հիվանդանոցում մահացել էր, մյուսի առողջությանը պատճառվել էր միջին ծանրության վնաս: Լայնածավալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ոստիկանության ծառայողները պարզել էին սպանությունը կատարելու մեջ կասկածվողի ինքնությունը: Նրա նկատմամբ հայտարարվել էր հետախուզում:

Կատարվում է քննություն:

Հավատարություն օրենքի առաջ

Ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանի հանձնարարականի համաձայն՝ ոստիկանության մարզային ստորաբաժանումների ծառայողները հունիսի 15-ին եւ 16-ին իրականացրել են ուժեղացված ծառայություն՝ հասարակական կարգի պահպանության, երթեւեկության անվտանգության բարձրացման, ինչպես եւ հանցագործություններն ու իրավախախտումները կանխելու եւ բացահայտելու նպատակով:

Ոստիկանության Արարատի մարզային վարչության եւ Արարատի մարզը սպասարկող ճանապարհային ոստիկանության ծառայողները օպերատիվ տվյալների հիման վրա ստուգումներ են իրականացրել մի քանի տասնյակ հանցավոր հեղինակությունների բնակության վայրերում:

Միաժամանակ, ճանապարհային երթեւեկության կանոնների տարբեր խախտումների փաստերով կազմվել է 139 արձանագրություն:

էջ 2

Լրագրողի մոտ հայտնաբերվեց շորթած գումարը

Հունիսի 19-ին ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչությունում ստացվել էր ճանապարհային ոստիկանության պաշտոնատար անձի զեկուցագիրը, ըստ որի՝ հունիսի 18-ին նրա աշխատասենյակ է ներկայացել մի լրագրող կին ու հայտնել, թե իբր պաշտոնատար անձի վերաբերյալ ունի վարկաբեկիչ տեղեկություններ եւ սպառնացել է, որ տեղեկատվությունը չորս լրատվամիջոցով կհրապարակի: Այդ քայլին չդիմելու համար պահանջել է 800 հազար դրամ:

Հաղորդումից անմիջապես հետո ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչության ծառայողների կողմից ձեռնարկվել են համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Հունիսի 19-ին, ժամը 16.30-ի սահմաններում, լրագրողը կրկին այցելել է ՃՈ պաշտոնատար անձի աշխատասենյակ՝ պահանջած գումարը վերցնելու: Նախօրոք պահանջած 800 հազարի փոխարեն արդեն պահանջել ու վերցրել է 400 հազար դրամ: Փողը ստանալուց անմիջապես հետո ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության ծառայողները մտել են աշխատասենյակ: Կնոջ մոտից հայտնաբերվել եւ առգրավվել է շորթմամբ հափշտակված 400 հազար դրամը:

Լրագրողը շորթում կատարելու կասկածանքով բերման է ենթարկվել ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչություն:

Դեպքի հանգամանքները պարզվում են:

«Վրիժառուն»

Դավից անտեղյակ, իր տան մոտ կայանեց մեքենան, իջավ ու քայլերն ուղղեց տուն, երբ անսպասելի հնչեց կրակոց...

էջ 3

Օրենքը չխախտելու համարձակություն

Ամեն օր քննություն են հանձնում մեր իրավունքներն ու պարտականությունները, գայթակղություններն ու գիտակցությունը...

էջ 6

Թմրամիջոց իրանցիների մոտ

Մեղրիի մաքսակետում իրանցի երիտասարդների խուզարկությամբ հայտնաբերվեց մեթամֆետամին եւ մարիխուանա:

էջ 6

Ակխոհեմները

Տարակարծությունը մարդավարի լուծելուց այնքան էին հեռացել, որ նրանց հարցերով ոստիկանությունում են զբաղվելու:

էջ 7

Աշխատանքային խորհրդակցություն

Սկիզբը՝ էջ 1

Միջոցառման ավարտին Վալերիյ Օսիպյանն իր տեղակալների, կոլեգիայի անդամների, գլխավոր եւ մարզային վարչությունների պետերի հետ քննարկեց հանցագործությունների եւ իրավախախտումների կանխմանն ու բացահայտմանը, հասարակական կարգի պահպանությանն ու ճանապարհային երթեւեկության անվտանգության բարձրացմանը վերաբերող հարցեր: Ոստիկանության պետը գերազանց գնահատեց ոստիկանության Երեւան քաղաքի վարչության եւ ենթակա ստորաբաժանումների վերջին օրերին մայրաքաղաքում իրականացրած ուժեղացված ծառայության արդյունքները:

Վալերիյ Օսիպյանը մարզային վարչությունների պետերին խիստ հանձնարարեց՝ նմանօրինակ ուժեղացված ծառայություններ իրականացնել նաեւ մարզերում՝ հասարակական կարգի պահպանության, ճանապարհային երթեւեկության անվտանգության, հանցագործությունների նախականխման ու բացահայտման մակարդակը բարձրացնելու նպատակով: Այս համատեքստում մարզային վարչությունների պետերին տրվեցին կոնկրետ ցուցումներ ու հանձնարարականներ:

Ծեծկռտուք եւ դանակահարություն

Հունիսի 15-ին, կեսգիշերն անց, ոստիկանության պարեկապահակեցային ծառայության գնդի աշխատակիցները ծառայություն իրականացնելիս Կողբացու փողոցի փաբերից մեկում լսել էին վիճաբանության ձայն: Մտնելով փաբ՝ նկատել էին հատակին ընկած մարմնական վնասվածքներով մի երիտասարդի, որին «շտապօգնության» մեքենայով ճանապարհել էին հիվանդանոց:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ քրեական հետախույզները պարզեցին, որ ժամը 1.00-ի սահմաններում փաբում մի խումբ անձինք վիճել էին, ինչն ավարտվել էր դանակահարությամբ:

Դեպքի վայրից երկու քաղաքացի հրավիրվեցին ոստիկանություն, իսկ մյուսները մարմնական վնասվածքներ պատճառելու կասկածանքով բերման ենթարկվեցին:

Ոստիկանության Կենտրոնական բաժնում հարուցվել է քրեական գործ:

Դեպքի հանգամանքները պարզվում են:

Քննությունը շարունակվում է:

Նարեկ ՄԱՐԳՍՅԱՆ

Միջազգային համաժողով կրթահամալիրում

Ոստիկանության կրթահամալիրում կայացավ «Անչափահասների հանցավորության հակազդման քրեաիրավական, քրեադատավարական եւ քրեաբանական հիմնախնդիրները» թեմայով միջազգային գիտագործնական համաժողով:

Անչափահասների հանցավորության վերաբերյալ հիմնախնդիրները մտահոգիչ են յուրաքանչյուր պետության համար: Եվ թեմայի տարատեսակ հիմնահարցերի վերաբերյալ զեկույցներ, քննարկումներ ունենալու նպատակով կրթահամալիրում էին համախմբվել Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի, Ուկրաինայի ոստիկանական բարձրագույն ուսումնական հաստատությունների, ինչպես եւ Հայաստանի մի շարք գերատեսչությունների ներկայացուցիչներ:

Կրթահամալիրի պետ Մուշեղ Բաբայանը ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանի եւ կրթահամալիրի ղեկավար կազմի անունից ողջունեց համաժողովի մասնակիցներին: Ընդգծելով նման գիտաժողովների կարեւորությունը՝ նա վստահեցրեց, որ համաժողովը լինելու է հետաքրքիր եւ բովանդակալից:

Ռուսաստանի ՆԳՆ Մոսկվայի համալսարանի պետ, ոստիկանության գեներալ-լեյտենանտ Իգոր Կալինիչենկոն շնորհակալական խոսք ուղղեց կրթահամալիրի ղեկավարությանը՝ բարձրակարգ միջոցառման համար: Այնուհետեւ համաժողովի մասնակիցները ներկայացրին անչափահասների հանցավորության վերաբերյալ տարատեսակ հիմնախնդիրներ: Բարձրաձայնվեցին այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են անչափահասների հանցավորության հիմքում առկա հոգեբանական, տարիքային եւ սեռական առանձնահատկությունները, հանցավորության կանխարգելման ձեւերը, պրոֆիլակտիկան, վիճակագրությունն ու զարգացման միտումները:

Իրավապահներն անդրադարձան անչափահասների իրավական պաշտպանությանը եւ նրանց քրեական պատասխանատվության ենթարկելու առանձնահատկություններին, քննարկեցին մամուլի դերակատարությունն անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների կանխարգելման գործում:

Ռուս գործընկերները խոսեցին անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների հակազդման ոլորտում ՌԴ ներքին գործերի նախարարության համառուսական գիտահետազոտական ինստիտուտի գիտական հետազոտությունների մասին:

Անչափահասների հանցագործություններին հակազդելու ուղիները վերլուծեցին նաեւ ուկրաինացի եւ բելառուս գործընկերները՝ ներկայացնելով իրենց փորձը:

Միջազգային գիտագործնական համաժողովի ընթացքում քննարկվեցին անչափահասների հանցավորության հակազդմանն ուղղված քրեաիրավական այլ հարցեր եւս:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Հավասարություն օրենքի առաջ

Սկիզբը՝ էջ 1

Տարբեր հանցագործությունների կասկածանքով ոստիկանության Արտաշատի, Մասիսի եւ Արարատի բաժիններ բերման է ենթարկվել 33 անձ: Բերման ենթարկվածներից մեկի մոտ հայտնաբերվել է թմրամիջոց:

Հայտնաբերվել են ճանապարհային երթեւեկության կանոնների կոպիտ խախտումներ թույլ տված, առանց վարորդական իրավունքի վկայականի, տրանսպորտային միջոցը առանց համարանիշերի շահագործող 4 վարորդ, որոնց մեքենաները տեղափոխվել են պահպանվող հատուկ տարածքներ:

Ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության եւ մարզը սպասարկող ճանապարհային ոստիկանները Աշտարակում, Ապարանում, Թալինում եւ այլուր իրականացրած ուժեղացված ծառայության ընթացքում հայտնաբերել են ճանապարհային երթեւեկության կանոնների 114 խախտում: Պրոֆիլակտիկ միջոցառումներ իրականացնելու համար բաժիններ են բերվել մարզում բնակվող քրեական հեղինակություններ:

Կոտայքի մարզում իրականացրած երկօրյա ուժեղացված ծառայության ընթացքում մարզային վարչության ու ենթակա ստորաբաժանումների, ինչպես եւ ճանապարհային ոստիկանության ծառայողները հայտնաբերել են երթեւեկության կանոնները կոպտորեն խախտած 66 վարորդի, որոնց նկատմամբ կազմվել են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություններ: Տարածքային բաժինների պահպանվող հատուկ տարածքներ են տեղափոխվել 16 մեքենա: Տարբեր կասկածանքներով բաժիններ բերման են ենթարկվել 5 քրեական հեղինակության եւ նախկինում դատապարտված 13 անձանց: Բերման են ենթարկվել նաեւ անձինք, որոնք չարամտորեն չեն ենթարկվել ոստիկանության ծառայողների օրինական պահանջներին:

Արմավիրի ոստիկաններն էլ ուժեղացված ծառայության արդյունքում հայտնաբերել են ոչ սթափ 14 վարորդի: Տարբեր կասկածանքներով, ինչպես եւ ոստիկանի օրինական պահանջը չկատարելու համար Արմավիրի մարզային վարչության տարածքային բաժիններ բերման են ենթարկվել ու բերվել 147 անձ:

Ուժեղացված ծառայություն են իրականացրել ոստիկանության Լոռու մարզային վարչության ու ենթակա բաժիններ, Լոռին սպասարկող ճանապարհային ոստիկանության ծառայողները: Հայտնաբերվել է 54 խախտում:

Ոստիկանության Շիրակի մարզային վարչության ու ենթակա ստորաբաժանումների, ինչպես եւ ճանապարհային ոստիկանության ծառայողներն ուժեղացված ռեժիմով ծառայությունն իրականացրել են 84 կարգախմբերով, որոնք շրջել են ողջ մարզով եւ հայտնաբերել մի շարք իրավախախտումներ: Կարգազանց 155 վարորդի նկատմամբ կազմվել են վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ: Տարածքային ստորաբաժանումներ տարբեր կասկածանքներով բերման են ենթարկվել բազմաթիվ անձինք, այդ թվում՝ քրեական հեղինակություններ: Հայտնաբերվել են սառը զենքեր ու մեկ հետախուզվող անձ: Ստուգումներ են իրականացվել մարզում բնակվող, այսպես կոչված՝ «օրենքով գողերի» բնակության հասցեներում:

Վայոց ձորի ոստիկանները եւս իրականացրել են ուժեղացված ծառայություն՝ հայտնաբերելով 17 խախտում: Տարածքայինն բաժիններ են հրավիրվել նախկինում դատապարտված մի խումբ անձինք, որոնց հետ տարվել են պրոֆիլակտիկ բնույթի աշխատանքներ:

Գեղարքունիքում մարզային ոստիկանության տարբեր ստորաբաժանումների ծառայողներ հայտնաբերել են ճանապարհային երթեւեկության կանոնների 155 խախտում, որոնց փաստերով կազմվել են համապատասխան արձանագրություններ: Պահպանվող հատուկ տարածքներ են տեղափոխվել 67 տրանսպորտային միջոց, որոնց վարորդներն իրենց գործողություններով սպառնալիք են ստեղծել երթեւեկության անվտանգության նկատմամբ: Տարբեր կասկածանքներով բաժիններ բերման են ենթարկվել ավելի քան 80 անձինք, կատարվել են խուզարկություններ, հայտնաբերվել թմրամիջոց:

Ոստիկանության մարզային ստորաբաժանումների ուժեղացված ծառայության մասին հրապարակումը եզրափակենք՝ անդրադառնալով Տավուշի ոստիկանների աշխատանքը ներկայացնելով: Ճանապարհային ոստիկանության եւ բաժինների ծառայողների կողմից պահպանվող հատուկ տարածքներ են տեղափոխվել 39 տրանսպորտային միջոց: Իջեւանի, Դիլիջանի, Տավուշի եւ Նոյեմբերյանի բաժիններ ում բերվել մարզում ապրող քրեական հեղինակություններ ու նախկինում մի քանի անգամ դատապարտված անձինք, որոնց հետ տարվել են պրոֆիլակտիկ բնույթի աշխատանքներ: Տարբեր կասկածանքներով հիշյալ բաժիններ բերման են ենթարկվել նաեւ մի խումբ անձինք:

Երեւան քաղաքը եւ մարզերը սպասարկող ստորաբաժանումները նույն հետեւողականությամբ շարունակելու են ուժեղացված ծառայությունն իրականացնել՝ հանդուրժողականություն ու ներողամտություն չցուցաբերելով իրավախախտների եւ օրինախախտների նկատմամբ:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Թրաֆիքինգ. սարկությունը 21-րդ դարում

Մարդու ազատությունն ու արժանապատվությունը հասարակական գիտակցության մեջ ամրագրված են որպես պաշտպանվածության երաշխիքներ եւ կարգավորվում են օրենքով: Ու թեեւ մարդկությունն արդեն վաղուց անցյալ ժամանակով է խոսում ստրկության մասին, այսօր էլ այն տարբեր դրսեւորումներով շարունակում է մնալ մեր իրականության չարիքներից մեկը: Ամեն տարի ավելի քան յոթ հարյուր հազար մարդ է ենթարկվում թրաֆիքինգի, այլ կերպ ասած՝ ժամանակակից ստրկացման:

Թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում միջազգային իրավական հիմնական փաստաթղթերն են ՄԱԿ-ի «Անդրազգային կազմակերպված հանցավորության կոնվենցիան» եւ դրան կից երկու արձանագրությունները, Եվրոպայի խորհրդի 2005 թ. «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին» կոնվենցիան: Այս միջազգային իրավական փաստաթղթերին Հայաստանը միացել է ՀՀ նոր քրեական օրենսգրքի ընդունումից հետո. 2003 թ. առաջին անգամ մարդկանց թրաֆիքինգը արձանագրվեց որպես քրեական հանցագործություն:

Հայաստանում մարդու թրաֆիքինգի դեմ տարվում է կանոնակարգված պայքար՝ մասնագիտական հատուկ պատրաստվածություն ունեցող իրավապահների կողմից: Մեր երկիրը համարվում է սկզբնաղբյուր երկիր. զոհերը հավաքագրվում են Հայաստանում, ապա տեղափոխվում այլ երկրներ, որտեղ էլ ենթարկվում են շահագործման: Արձանագրվում են նաեւ ներքին թրաֆիքինգի դեպքեր. շահագործումը կատարվում է Հայաստանում:

Ներկայացնենք ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության 3-րդ վարչության ծառայողների վերջերս բացահայտած աշխատանքային շահագործման դեպքը:

Օպերատիվ տվյալներ էին ստացվել, որ Երեւանում բնակվող 43-ամյա մի տղամարդ ու 49-ամյա մի կին մայրաքաղաքի կենտրոնում կազմակերպում են փողոցային մանր առեւտրով զբաղվող անձանց դրամահավաքի աշխատանքներ, բռնություն գործադրելով կամ գործադրելու սպառնալիքով վերցնում են առեւտրով վաստակած գումարի մի մասը:

Օպերատիվ տվյալների հիման վրա ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվեց, որ տղամարդն ու կինը 2016-2019 թթ. մուրացկանությամբ եւ փողոցային մանր առեւտրով զբաղվող մի խումբ անձանց դրել են շահագործման վիճակի մեջ՝ նրանց կյանքի եւ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ գործադրելու սպառնալիքով: Բացի այդ՝ նրանցից մեկին հարկադրել են մուրացկանությամբ զբաղվել:

Թրաֆիքինգի զոհի՝ հասարակական բնականոն կյանքին վերաինտեգրվելու գործընթացը, թերեւս, ամենակարեւորներից է: Ոչ պակաս կարեւոր է նաեւ թրաֆիքինգ երեւույթի մասին բարձրաձայնելը: Զոհին հասարակական բնականոն կյանքին ինտեգրելը կանոնակարգվում է նաեւ օրենքով:

Այս հանցատեսակը չի ճանաչում ո՛չ ազգություն, ո՛չ հավատք, ո՛չ այլ հանգամանք: Իսկ մարդկանց, որոնք չգիտեն կամ տեղեկացված չեն երեւույթի մասին, առավել հեշտ է խաբել, համոզել եւ շահագործել: Հրապարակման խնդիրը հասարակական իրազեկվածության բարձրացումն է, ինչը կանխարգելիչ նշանակություն ունի:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

«Վրիժառուն»

Սյունիքի մարզի բնակիչ Արարատ Պետրոսյանը երկու-երեք տարի առաջ իրենց գյուղի հարակից տարածքում անասուններն էր արածեցնում, երբ մոշուտների միջից զենք գտավ: Մարտական փամփուշտներ կրակելու համար վերափոխված ինքնաշեն կարճեցված փողով «ՏՕԶ-8» կարաբին էր՝ փամփուշտներով: Ամբողջ օրը հիացավ գտածոյով, իսկ երեկոյան թաքցրեց իրենց այգետնակում: Ժամանակ առ ժամանակ ձեռքն էր վերցնում կարաբինն ու կրակում օդ: Լավ էր զգում: Բայց մի օր կրակեց ոչ թե օդ, այլ համագյուղացու վրա...

Ժողովրդական խոսքն ասում է՝ «Պատից կախված հրացանը յոթ տարին մեկ կկրակի»: Այսինքն՝ մի օր զենքը հանցագործության գործիք կդառնա: Վտանգավոր պահուստից կառչածներին ուղղված սթափության կոչ է ժողովրդական խոսքը: Սթափվում են խոհեմները եւ ապօրինի զենք-զինամթերքը կամավոր ներկայացնում ոստիկանություն: Համառները շարունակում են համառորեն կառչել ապօրինի զենքից, մինչեւ մի օր կամ փորձանքը կթակի դուռը, կամ՝ ոստիկանները:

Արարատ Պետրոսյանը յոթ տարի չսպասեց հրացանի կրակելուն. նախ կրակեց հաճույքի համար, հետո՝ վնասելու դիտավորությամբ:

Գյուղում պտտվող խոսակցություններ էին հասել ականջին, որ համագյուղացի Աշոտ Պողոսյանն իր մասին հերյուրանքներ է տարածում: Սրանից-նրանից լսած խոսքն անձամբ Աշոտից չպարզեց: Լարվեց նրա դեմ ու որոշեց վրեժ լուծել: Զենքն ուներ՝ ուժեղ էր զգում իրեն, խոհեմություն չուներ, որ կշռադատեր անելիքը ու, նորից ժողովրդական խոսքով ասած՝ յոթ չափեր՝ մեկ կտրեր: Կտրեց միանգամից: Զինված գնաց ու Աշոտի ճամփան պահեց. գիտեր աշխատանքից տուն դառնալու ժամը:

Երկար չսպասեց. Աշոտը, դավից անտեղյակ, իր տան մոտ կայանեց մեքենան, իջավ ու քայլերն ուղղեց տուն, երբ անսպասելի դեմը դուրս ելավ Արարատն ու կրակեց...

Թեւից վիրավոր Աշոտը դիմեց փախուստի: Արարատ Պետրոսյանի նպատակը, սակայն, նրա առողջությանը ծանր վնասվածք պատճառելը կամ սպանելն էր. մոտ քսան մետրի չափ հետապնդեց վիրավորին: Հերթական կրակոցն ուշացավ. հարեւանը ամոթանք տալով՝ փորձեց խլել հրացանը: Հետո հավաքվեցին մյուս հարեւանները, փորձեցին զգոնության կոչել, բայց հնչեց երկրորդ կրակոցը, որը, բարեբախտաբար, նպատակին չհասավ, իսկ երրորդը չկրակվեց. փամփուշտը «լռվեց»:

Խանգարողները շատացել էին, «շտապօգնության» մեքենան էլ ժամանել էր: Արարատը հրացանը նետեց մոտակա ջրատարն ու փախուստի դիմեց:

Վրեժը կիսատ-պռատ լուծված էր: Բայց չէր լուծված քրեական պատասխանատվության ենթարկվելու հարցը: Դա էլ լուծվեց. քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերվեց ու բերման ենթարկվեց:

Արարատ Պետրոսյանի նկատմամբ հարուցված քրեական գործը, որի նախաքննությունն ավարտվեց օրերս, քրեական օրենսգրքի 34-104 (սպանության փորձ) եւ 235 (ապօրինի կերպով զենք, ռազմամթերք պահելը, կրելը) հոդվածներով է:

Քրեական գործն ուղարկվել է դատարան:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Գողությունները բացահայտվեցին

Հունիսի 8-ին ոստիկանության Կենտրոնական բաժնի քրեական հետախուզությունները, օպերատիվ տվյալներն իրացնելիս, Մաշտոցի պողոտայից բաժին բերման ենթարկեցին Ղազար Փարպեցու փողոցի 20-ամյա մի բնակչի: Ընդ որում, մեկ գողության կասկածանք չէր:

Պարզվեց, որ նա նույն օրը, լուսադեմին, Վազգեն Սարգսյան փողոցում հեծանիվ էր հափշտակել, երկու օր առաջ Տերյանի փողոցում՝ էլեկտրական ինքնագնաց: Հունիսի 4-ին, դարձյալ Վազգեն Սարգսյան փողոցում, անհատ ձեռներեցի սառնարանից 150 շիշ զովացուցիչ ըմպելիք էր գողացել: Եվ սա ամենը չէր:

Հունիսի 3-ին Շահումյան փողոցի արագ սննդի կետից էր գողություն արել, օրերի տարբերությամբ՝ Սարյան փողոցում տեղադրված մի սառնարանից կրկին հափշտակել էր ըմպելիքներ: Ապրիլ-մայիս ամիսներին Աբովյան փողոցից էլեկտրական սրճաղաց էր գողացել, Տիգրան Մեծի պողոտայում տեղադրված մի սառնարանից՝ մի քանի տասնյակ շիշ զովացուցիչ ըմպելիք:

Գողությունների փաստով կատարվում է քննություն:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Սերգեյ Ստեփանյան

Կյանքից հեռացավ պաշտոնաթող փոխգնդապետ Սերգեյ Ստեփանյանը

Ծնվել է 1925 թ., Թբիլիսիում:

1949 թ. ավարտելով Թբիլիսիի բժշկական ինստիտուտը՝ գործուղվել է Տաջիկստանի Կուրգան-Տյուբե քաղաք՝ որպես կալանավայրի բժիշկ: 1953-1961 թթ. եղել է նույն կալանավայրի սանիտարական մասի պետը:

1961 թ. տեղափոխվել է Երեւան եւ աշխատանքի անցել ներքին գործերի նախարարության կալանավայրերի վարչությունում՝ որպես բուժական գծով ավագ տեսուչ:

1965-1988 թթ.՝ մինչեւ թոշակի անցնելը, աշխատել է ՆԳՆ բուժվարչությունում:

Սերգեյ Ստեփանյանի՝ սրտացավ մարդու, օրինակելի սպայի, հմուտ բժշկի ու վստահելի գործընկերոջ հիշատակը միշտ կմնա նրան ճանաչողների սրտերում:

Հանրապետության ոստիկանության վետերանների խորհուրդ

www.police.am

Մեքենայի պատուհանից կրակողը հայտնաբերվեց

Հունիսի 14-ին ոստիկանության Կոտայքի բաժնի ոստիկանները տեղեկություն էին ստացել, որ Արամուս գյուղի բնակիչ Արշակ Մ.-ն իր «ՎԱԶ-21099» մեքենան վարելիս խախտել է երթեւեկության կանոնները, անհարգալից վերաբերմունք է դրսեւորել հասարակության նկատմամբ եւ ինքնաշեն սարքով կրակել մեքենայի պատուհանից:

Նույն օրը Արշակ Մ.-ն, մեքենայով հանդերձ, բերման ենթարկվեց ոստիկանության Կոտայքի բաժին, որտեղ ներկայացրեց ինքնաշեն սարքը:

Հանգամանքները պարզվում են:

Ոստիկանները պարզել են կասկածյալի ինքնությունը

Հունիսի 14-ին ոստիկանության Արաբկիրի բաժնում հիվանդանոցից հաղորդում էր ստացվել, որ կտրած-ծակած վերքով բուժօգնության է տեղափոխվել 27-ամյա տղամարդ:

Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ պարզվեց, որ ժամը 01.00-ին տուժածն ու մի տղամարդ «Արաբկիր» զբոսայգում վիճել են, հարվածել իրար, որի ընթացքում տղամարդը կտրող-ծակող առարկայով տուժողին պատճառել է մարմնական վնասվածք:

Արաբկիրի քրեական հետախույզները եւ ՊՊԳՎ տարածքային ստորաբաժանման ծառայողները պարզել են քաղաքացուն մարմնական վնասվածք պատճառած անձի ինքնությունը:

Ձեռնարկվում են միջոցառումներ նրան հայտնաբերելու ուղղությամբ:

Ոստիկանները բացահայտեցին գողությունը

Հունիսի 13-ի լուսադեմին ոստիկանության Ավանի բաժանմունքի ծառայողները, ՊՊԾ գնդի 2-րդ վաշտի ծառայողների հետ համատեղ իրացնելով օպերատիվ տվյալները, Աճառյան փողոցից ոստիկանության Ավանի բաժանմունք բերման են ենթարկել նույն փողոցի բնակիչ երկու երիտասարդների:

Պարզվել է, որ նրանք հունիսի 7-ի ժամը 17.00-ից հունիսի 13-ի ժամը 04.00-ն ընկած ժամանակահատվածում Ծարավ Աղբյուրի փողոցում գործող համակարգչային խաղասրահից գողացել են հեռուստացույցներ, խաղային համակարգիչներ եւ հեռակառավարման վահանակներ:

Կատարվում է քննություն:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Ինքնաբուժողներ

Ոստիկանության Կումայրիի բաժնի աշխատակիցները իրացնելով ստացված օպերատիվ տեղեկությունները, թմրանյութ պահելու, պատրաստելու, օգտագործելու կասկածանքով, բերման ենթարկեցին գյումրիաբնակ Վարդան Նիկողոսյանին: Նրա մեքենայի զննությամբ հայտնաբերվեց բուսական զանգված:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Վարդանը խոստովանական բացատրություն տվեց: Կանեփի տերեւները հավաքել էր անցյալ տարվա սեպտեմբերին՝ Ղարիբջանյան գյուղի դաշտերից: Չորացրել ու պահել էր անձնական օգտագործման համար եւ «մոռացել» թմրազանգվածի գոյության մասին: Հիշեցրին իրավապահները:

Վարդան Նիկողոսյանը կատարած արարքի համար ենթարկվեց վարչական պատասխանատվության:

Ոստիկանության Կումայրիի բաժնի աշխատակիցները կասկածանքով բերման ենթարկեցին նաեւ Լեռնիկ Սիմոնյանին: Անձնական խուզարկությամբ նրա գրպանից հայտնաբերվեց պոլիէթիլենային տոպրակ՝ չորացված, մանրացված կանեփանման զանգվածով: Նյութեր-

լով, չեն օգնում, ուստի երբեմն դիմում է կանեփի «օգնությանը»: Թմրանյութ է պատրաստում եւ օգտագործում: Ինքնաբուժումից գոհ է, ու որպեսզի թմրապաշար միշտ ունենա, հողամասում կանեփ ցանեց: Ջրում էր, խնամում: Որոշ ժամանակ անց էլ բերքը հավաքեց ու սկսեց գլխացավը «բուժել»: Մխելուց բացի, նաեւ խիկա թմրամիջոց էր պատրաստում եւ օգտագործում: «Գլխացավից գլխացավ»՝ կանեփի օգնությանն էր դիմում: Դերթական անգամ, սակայն, օգտագործել չհաստատեց. հանգրվանեց ոստիկանությունում: Լեռնիկ Սիմոնյանը եւս ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Ոստիկանության Կումայրիի բաժնում կասկածանքով բերման ենթարկվեց նաեւ գյումրիաբնակ Արսեն Նահապետյանը: Նրա մոտից խուզարկությամբ հայտնաբերվեց լորազեպամ հոգեմետ դեղահաբ, որի կեսը հասցրել էր օգտագործել: Պարզվեց՝ հարեւանուհին էր տվել: Նա հաշվառված էր եւ դեղատոմսով ստանում էր հասանելիք դեղորայքը: Օրեր առաջ Արսենը հարեւանուհուն՝ Սիլվային, պատմել էր, որ գիշերները վատ է քնում: «Սրտացավ» հարեւանուհին էլ նրան տվել էր երեք դեղահաբ: Ի դեպ, Սիլվան տեղեկացված էր, որ դեղահաբերը հատուկ դեղատոմսով են, իսկ բժիշկը բացատրել էր պահպանման կարգը: Սակայն որոշել էր հարեւանի քունը «կարգավորել»՝ խախտելով քրեական օրենսգրքի 266 հոդվածի 1-ին մասի պահանջները:

Կատարվում է քննություն:

Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ինչու եւ ինչպես չվիճել

Ընտանեկան կոնֆլիկտները հասարակության ամենատարածված խնդիրներից են: Շատ են դեպքերը, երբ ամուսինները չեն հասկանում իրար, ինչն էլ հանգեցնում է ընտանեկան հակամարտությունների: Հետաքրքիր դիտարկում են արել մասնագետները. ընտանեկան փոխըմբռնում կա ավագ սերնդի ամուսինների միջեւ: Երիտասարդներն ավելի անհանդուրժող են:

Ընտանիքը, կարելի է ասել, մարդկային հարաբերությունների ամենահին ինստիտուտն է, որը եզակի երեւույթ է մարդկության պատմության մեջ: Առանձնահատկությունն այն է, որ երկու անծանոթ անհատներ հանդիպում են, միավորվում, տասնյակ տարիներ համատեղ կյանք վարում, ժառանգներ ունենում: Տասնյակ տարիներ ձգվող հարաբերություններում հնարավոր չէ, որ տեղի չունենան վեճեր, հակամարտություններ, ճգնաժամեր: Կոնֆլիկտներից հնարավոր չէ խուսափել:

Կոնֆլիկտների լուծման ձեւի ընտրությունից է կախված, թե վիճաբանությունն ինչ ընթացք կունենա. այն կարող է բերել խաղաղության կամ նոր վիճաբանության:

Ընտանիքը քայքայող «միջոցներից» են մարդկային արժանապատվությունը վիրավորելը, արհամարհանքը, դիմացինի կարծիքն անտեսելը: Արդյունքում՝ վերանում է փոխադարձ հարգանքը, ամուսնական շփումը դառնում է տհաճ պարտականություն, կարծիքների փոխանակումը՝ դիմացինին ստորացնելու միջոց: Եթե կոնֆլիկտը լուծելու համար ընտրվել է խաղաղեցնող միջոց, ապա ամուսինները պատրաստ են ընդունել միմյանց կարծիքը: Փորձում են հանուն ընտանիքի, երեխաների ընդունել ու շտկել իրենց սխալը:

Ըստ սոցիալական հետազոտությունների արդյունքների՝ գիտնականներն առանձնացրել են այն սկզբունքները, որոնք թույլ կտան խուսափել ընտանեկան կոնֆլիկտներից:

- Նախ պետք է պարզել կոնֆլիկտի պատճառը: Դրա համար անհրաժեշտ է նստել սեղանի շուրջ եւ զրուցել: Հաճախ կոնֆլիկտի նախաձեռնող կողմն է առաջինը գնում փոխզիջման՝ փորձելով հարթել ընտանեկան հարաբերությունները: Իսկ մյուս կողմը պարտավոր է աջակցել այդ նախաձեռնությանը:

- Խորհուրդ չի տրվում կոնֆլիկտի մեջ ներառել երրորդ անձի՝ երեխաներին, ծնողներին, ընկերներին, հարեւաններին: Երրորդ կողմը կպաշտպանի վիճաբանողներից մեկին, չի կարողանա օբյեկտիվ գնահատել ստեղծված իրավիճակը: Ընտանեկան կոնֆլիկտը ծանր ազդեցություն է ունենում երեխաների հոգեկան աշխարհի վրա: Հետագայում նրանք կարող են նման հարաբերություններ հաստատել իրենց ընտանիքում:

- Հարկավոր է կենտրոնանալ գլխավոր խնդրի վրա, լուծել այն եւ նոր միայն անցնել երկրորդական հարցերին: Քննարկումը պետք է ներառի ոչ միայն կոնֆլիկտն ամբողջությամբ, այլեւ ուսումնասիրի բոլոր նրբերանգներն ու սխալները:

- Հարկավոր է հանդուրժողականություն ցուցաբերել «հակառակորդ» կողմի կարծիքին, եթե անգամ այն անհեթեթ է: Կարեւոր է հասկանալ միմյանց դիրքորոշումը:

- Կոնֆլիկտային իրավիճակից խուսափելու համար անհրաժեշտ է գոնե ձեւականորեն կամ մասամբ ընդունել դիմացինի ցանկությունները, մյուս կողմից՝ չպնդել պահանջների կատարումն ամբողջությամբ:

- Հարկավոր է խուսափել համառությունից եւ եսասիրությունից, ինչը միշտ բերում է հակամարտության:

- Պետք է հիշել, որ հումորի զգացումը հարթում է հակամարտությունը, բայց չի ազատում խնդրի քննարկումից:

- Կարող եք նաեւ անտեսել կողակցի՝ վիճելու նախաձեռնությունը, եթե զգում եք, որ նա վհատված է կամ զայրացած: Պետք չէ կոնֆլիկտի մեջ մտնել մանրուքի պատճառով:

- Համատեղ հաղթահարեք բոլոր դժվարությունները: Դա իրար արագ հասկանալու հիանալի հնարավորություն է:

- Կարողացեք հանգիստ եւ հանդարտ ընդունել քննադատությունը: Ցանկացած խնդիր հնարավոր է լուծել ընտանիքի պատերի ներսում՝ առանց վիրավորանքի եւ ստորացումների:

Միաժամանակ լուծել բոլոր հարցերը հնարավոր չէ. հիմնախնդիրն ավելի կխորանա: Նման դեպքերում ոչ թե լուծում կտաք, այլ ավելի կխճճեք:

Ընտանեկան կոնֆլիկտները կարող են բացասաբար ազդել ընտանիքի անդամների առողջական վիճակի վրա, ստեղծել անբարենպաստ մթնոլորտ, ինչն իր հերթին չի կարող չազդել ընտանիքում մեծացող անչափահասների հոգեբանական եւ ֆիզիկական զարգացման վրա:

Ընտանեկան վիճաբանությունների կանխարգելումը կարեւոր խնդիր է ոչ միայն կոնկրետ ընտանիքի, այլեւ հասարակության համար, քանի որ սթրեսային վիճակները, այսպես թե այնպես, փոխանցվում են կոլեկտիվներին ու չեն կարող իրենց վնասակար ազդեցությունը չունենալ աշխատավայրում, դպրոցում, բակում:

Մասնագետները բացահայտել են, որ ընտանեկան հարաբերություններում որոշ բառերի, ավելի ստույգ՝ որոշ անձնական դերանունների կիրառությունը կարող է սրել կոնֆլիկտային իրավիճակը, իսկ դրանց մեկ այլ խմբի կիրառությունը, ընդհակառակը՝ խաղարարար ազդեցություն թողնել: Օրինակ «մենք», «մեզ», «մեր» դերանունները նպաստում են, որ հակասություններն ընտանիքում արագ հարթվեն: Կոնֆլիկտային ընտանիքներում, որպես կանոն, անդամներից մեկը փորձում է մշտապես դաս տալ մյուսներին՝ հաճախ օգտագործելով «դու պարտավոր ես», «դու պետք է այսպես անես», «քո պարտականությունն է» եւ նման այլ արտահայտություններ:

Որոշ մասնագետներ այն կարծիքին են, որ ընտանեկան վիճաբանությունները կանխելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել խոսքին, ագրեսիվ եւ հարձակողական արտահայտություններ չօգտագործել:

Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ

Զվարճալի ամփոփագիր

Նոր սերունդ

Ոստիկանություն է զանգել 7-րդ դասարանցի մի աղջիկ եւ հայտնել, որ տատիկն ու հորաքույրը բռնի ուժ են կիրառում քրոջ եւ եղբոր նկատմամբ:

Մեկնել է նաեւ անչափահասների գործերով եւ ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքի տեսուչը: Պարզվել է՝ 72-ամյա տատը ձեռուոտով եւ սրբիչով խփել է թոռնուհուն՝ պատճառելով վնասվածք:

Տատիկն, այնուամենայնիվ, բաց է թողնվել:

Ջոքանչություն

44-ամյա մի տղամարդ հաղորդում է տվել, որ գիշերը կենցաղային հարցերի շուրջ վիճաբանության ընթացքում 56-ամյա զոքանչը իր տան դիմաց քարով խփել է դեմքին՝ պատճառելով վնասվածք:

Ամբողջովին սպիտակ տենդ

Ոստիկանություն է զանգել 46-ամյա մի տղամարդ եւ հայտնել, թե «հաստատ գժանոցում ռումբը տրաքավ»:

Պարզվել է, որ ահազանգողը գտնվել է ալկոհոլի խիստ ազդեցության տակ, ինչը ստուգվել է «հոգեբուժական հիվանդանոցում», ալկո-թեսթի միջոցով: Քիչ սթափվելով՝ տղամարդը հայտնել է, որ չի հիշում՝ ուր է զանգել եւ ինչ է հայտնել: Իսկ հոգեբուժական հիվանդանոցում, բնականաբար, ոչ մի ռումբ չի պայթել:

Ֆրանկոֆոնիան կապ չունի

Գողություն կատարելու կասկածանքով Ֆրանկոֆոնիայի բուլվարից ոստիկանները բերման են ենթարկել 52-ամյա մի տղամարդու: Բացատրական աշխատանքի արդյունքում նա խոստովանել է, որ օրեր առաջ, օգտվելով Նոր հողեր կոչվող թաղամասում բնակվող իր նախկին կնոջ տան դուռը բաց լինելու հանգամանքից, բազմոցի վրայից գողացել է 15 հազար դրամ:

Պարզվել է նաեւ, որ ծմռանը մի ավտոտնակից գողացել է պղնձյա մալուխներ, որոնք յոթ հազար դրամով վաճառել է գունավոր մետաղների հանձնման կետում:

Տղամարդը բաց է թողնվել:

Ճապոնացու փախուստը Հայաստան

Հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ «երկու սրունքների շան կծած վերքեր» ախտորոշմամբ բուժօգնության է դիմել Ճապոնիայի 74-ամյա մի քաղաքացի:

Մեկնած ոստիկաններին նա հայտնել է, որ նախորդ օրվա ցերեկը Վրաստանի Թելավի քաղաքում թափառող շունն է կծել իրեն:

Ապօրինի հրաման՝ շներին

Գիշերը 26-ամյա մի իրանցի հաղորդում է տվել, որ ժամեր առաջ Հյուսիսային պողոտայում 52-ամյա Արսենի շները, նրա հրահանգով, հարձակվել եւ կծել են իր ազդրը՝ պատճառելով վնասվածք:

Հոգատար ազգականը

Հաղորդվել էր Գրիբոյեդով գյուղի մի տան բակից եռակցման սարքը գողանալու մասին:

Պարզվել է, որ իրականում գողություն չի եղել: Տանտիրոջ ազգականը տանը հարակից ճանապարհով անցնելիս նկատել է հողամասում դրված եռակցման սարքը եւ, անվտանգության նկատառումներից ելնելով, այն տեղափոխել նույն տան խորդանոց:

www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ հունիսի 13-ից 20-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 30 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը հետախուզվում էր սպանության եւ դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու, 1-ը՝ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքի, 1-ը՝ բռնաբարության փորձի, 5-ը՝ գողության, 2-ը՝ խարդախության, 1-ը՝ խարդախության, փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ հափշտակելու կամ վնասելու եւ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու, 1-ը՝ իրացնելու կամ պատրաստելու նպատակով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կամ դրանք ապօրինի իրացնելու եւ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ (կամ) դրանց պրեկուրսորների մաքսանենգության, 1-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու եւ պետական սահմանն ապօրինի հատելու համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 6 հետախուզվող:

Արձանագրվել է 90 ճանապարհատրանսպորտային պատահար. 7 մարդ զոհվել է, 126-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 19 դեպք. 4 մարդ զոհվել է, իսկ 18-ը ստացել են մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հանրապետության ճանապարհներին

Հունիսի 17-ին Երեւանի Տ. Պետրոսյան փողոցում իրար են բախվել «Կիա» մոտոցիկլետը եւ «Ֆոլքսվագեն» մակնիշի ավտոմեքենան. 22-ամյա մոտոցիկլիստը եւ «Ֆոլքսվագեն»-ի 46-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հունիսի 17-ին Երեւանի Սեբաստիայի եւ Շահումյան 1-ին փողոցների խաչմերուկում «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 22-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունիսի 17-ին Այգավան-Եղեգնավան ճանապարհի 1-ին կմ-ին «ՎԱԶ-21011» մակնիշի ավտոմեքենան բախվել է «ՎԱԶ-21043» մեքենայի. վարորդները եւ «ՎԱԶ-21011»-ի 22-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հունիսի 17-ին Սպիտակ-Գյումրի ճանապարհի 1-ին կմ-ին իրար են բախվել «Ֆոլքսվագեն» եւ «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենաներ. «Ֆոլքսվագեն»-ի 38-ամյա վարորդը տեղում մահացել է, իսկ երկու ուղեւորները եւ «Մերսեդես»-ի 35-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հունիսի 17-ին Երեւանի Բաղրամյան պողոտայում «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 22-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունիսի 18-ին Երեւանի Գարեգին Նժդեհի եւ Սեւանի փողոցների խաչմերուկում իրար են բախվել «Օպել» մակնիշի երկու ավտոմեքենա. վարորդներից մեկը տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունիսի 18-ին Երեւանի Էրեբունի եւ Ազատամարտիկների փողոցների խաչմերուկում իրար են բախվել «ԲՄՎ» եւ «Հունդաի» մակնիշի ավտոմեքենաներ. «Հունդաի»-ի երկու ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հունիսի 18-ին Երեւանի Երեւանյան փողոցում իրար են բախվել «Ինֆինիտի», «Հոնդա» եւ «Նիսան» մակնիշի ավտոմեքենաներ. «Ինֆինիտի»-ի 28-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունիսի 18-ին «Օպել Աստրա» մակնիշի ավտոմեքենան Արարատի մարզի Արարատ գյուղում դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի գոտուց եւ բախվել պատին. 34-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունիսի 18-ին Արմավիրի մարզի Հայկավան գյուղում իրար են բախվել «ԳԱԶ-2410» եւ «Օպել» մակնիշի ավտոմեքենաներ. «Օպել»-ի երկու ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հունիսի 18-ին Արմավիրի մարզի Արագած գյուղում «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի մասից եւ կողաշրջվել. 7-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունիսի 18-ին Սեւան-Մարտունի-Գետափ ճանապարհի 2-րդ կմ-ին իրար են բախվել «ՎԱԶ-2106» եւ «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենաներ. վարորդները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հունիսի 18-ին Գյումրի-Երեւան ճանապարհի 19-րդ կմ-ին «Օպել» մակնիշի ավտոմեքենան կողաշրջվել է. 39-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունիսի 19-ին Երեւանի Զ. Անդրանիկի փողոցում «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 18-ամյա երկու քաղաքացիների, որոնք մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

Քաղաքական սպանությունների պատմությունից

Սկիզբը՝ նախորդ համարում

Փոքր չէ նաեւ ժողովրդավարական պետությունների ղեկավարների դեմ իրականացված մահափորձերի թիվը. տասնյակ անգամ մահափորձ է կատարվել Ֆրանսիայի նախագահ Շառլ դը Գոլի դեմ, 1986 թվականին Ստոկհոլմի փողոցներից մեկում գնդակահարվեց Շվեդիայի վարչապետ Ուլոֆ Պալմեն, 2003 թվականին Շվեդիայում դանակի հարվածով սպանվեց Աննա Լինդը (մարդասպանը հոգեկան հիվանդությամբ տառապող իմիգրանտ էր):

Իսրայելցի հետազոտողներ Ասաֆն ու Նոյան Ցյուսմանը մի հոդվածում նշում են, որ ժամանակակից աշխարհում քաղաքական սպանություններն ու մահափորձերը բավական հաճախադեպ են, չնայած պետական ու քաղաքական գործիչների պահպանության այսպիսի մակարդակ մարդկության պատմության ընթացքում երբեւէ չի արձանագրվել:

Ամերիկացի պատմաբան Լինդա Լոսելան «Սպանության քաղաքականությունը» գրքում առանձնացրել է քաղաքական մահափորձերի կազմակերպիչների հիմնական նպատակները: Այսպես, նրանք կարող են կոնկրետ քաղաքական նպատակ հետապնդել՝ ջանալ բաոս ստեղծել երկրում (60-ականներին, օրինակ, այդպես էին գործում իտալական «Կարմիր բրիգադները», գերմանական «Կարմիր բանակը» եւ ֆրանսիական «Ակսյոն դիրեկտը»), վրեժ լուծել (1961 թվականին քաղաքական հակառակորդներն այդպես սպանեցին Կոնգոյի նախագահ Պատրիս Լումումբային, 1995 թվականին Իսրայելի վարչապետ Իցհակ Ռաբինը գնդակահարվեց հրեա ծայրահեղականների կողմից, որոնք դժգոհ էին նրա քաղաքականությունից): Որոշ հանցագործներ փորձել են այդ եղանակով իրենց վրա սեւեռել զանգվածային լրատվամիջոցների ուշադրությունը (1981 թվականին ԱՄՆ-ի նախագահ Ռոնալդ Ռեյգանի դեմ մահափորձ կատարեց Ջոն Հինքլին, որն այդպես ցանկանում էր դուր գալ կինոաստղ Ջոդի Ֆոսթերին): ՁԼՄ-ների ուշադրությունը գրավելու փորձեր երբեմն արել են նաեւ իշխանությունները: Այդպիսի մահափորձերի թվում են Կիրովի սպանությունը՝ 30-ական թվականներին, եւ

մահափորձը Թուրքմենստանի նախագահ Սապարմուրատ Նիյազովի դեմ: Երկու դեպքում էլ կատարվածն օգտագործվեց իշխանությունների քաղաքականության կտրուկ փոփոխության համար:

Փորձագետների հետազոտությունները ցույց են տալիս, որ ժողովրդավարական պետություններում պետական ու քաղաքական գործչի՝ մահափորձի զոհ դառնալու հավանականությունն աճում է, եթե պետությունն ունի մի շարք առանձնահատկություններ: Այսպես, մահափորձի հավանականությունը մեծ է այն դեպքում, եթե քաղաքական կամ պետական գործչի ձեռքում կենտրոնացած է ողջ իշխանությունը: Այդ թվին են դասվում նախագահներն ու վարչապետները, որոնց լիազորություններն էապես գերազանցում են իշխանության այլ ներկայացուցիչների լիազորություններին: Առավել վտանգավոր է ղեկավարել երկիրը, որտեղ իշխանությունը խիստ կենտրոնացված է, եւ իշխանության գալու համար մրցակցում են տարբեր կրոնական, ազգայնական ու ազգային փոքրամասնություններ: Մահափորձերի հավանականությունն աճում է նաեւ հարեւան պետությունների հետ առճակատման շրջանում կամ էլ երբ երկրում մշակված չեն իրավահաջորդության եւ իշխանության փոխանցման հստակ մեխանիզմներ:

Զանգվածային լրատվության միջոցների ազատության աստիճանը քաղաքական մահափորձերի առումով երկակի ազդեցություն ունի: Մի կողմից՝ իշխանության վերահսկողության տակ գտնվող ՁԼՄ-ները ստեղծում են առաջնորդների անձի պաշտամունք, ինչը նպաստում է հասարակության որոշ շրջանների ու խմբերի դժգոհության աճին, մյուս կողմից՝ այդպիսի պետություններում նվազում է քաղաքական սպանությունների հասարակական հնչողության աստիճանը. իշխանություններին հաջողվում է թաքցնել կամ սքողել գործերի իրական վիճակը:

Մասնագետներն ընդգծում են, որ քաղաքական մահափորձերի հավանականությունը նվազում է, եթե պետական կյանքին մասնակցում են մեծ թվով ոչ պետական ինստիտուտներ՝ կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, անկախ հետազոտական կենտրոններ, արհմիություններ, փորձագետներ եւ այլն: Չնայած՝ այս դեպքում էլ հնարավոր չի եղել խուսափել քաղաքական սպանություններից: Քաղաքական սպանություններ արձանագրվել են նաեւ ամենաժողովրդավարական, կայուն եւ իշխանությունների թեւերի սերտ համագործակցության հնագույն ավանդույթներ ունեցող պետություններում:

Գողանալ հերոսի կոչում

Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհվում էր բացառիկ քաջության եւ հերոսության համար: Օրինակ, Գորիսի միլիցիայի ավագ սերժանտ Սուրեն Առաքելյանը կռվելով Հայկական 89-րդ Թամանյան դիվիզիայում՝ իր մարմնով ծածկել էր թշնամու հրակնատը եւ ապահովել ստորաբաժանման առաջխաղացումը, ինչի համար հետմահու արժանացավ Խորհրդային Միության հերոսի կոչման: Մինչդեռ հայտնի է դեպք, որ այդ բարձր կոչմանն արժանացել է հանցագործը...

Վլադիմիր Գոլուբենկոն (1914-1940 թթ.) 19 տարեկան հասակում հայտնվում է բանտում: Գողության համար դատապարտվում է 5 տարվա բանտարկության: Լավ վարքագծի համար վաղաժամկետ ազատվում է, սակայն 23 տարեկանում կրկին ազատազրկվում է, բայց նրան հաջողվում փախչել ու նոր փաստաթղթեր ձեռք բերել՝ դառնալով Վալենտին Պուրգին: Այդ փաստաթղթերով մեկնում է Սվերդլովսկ եւ ընդունվում ռազմատրանսպորտային ակադեմիա եւ լրագրող աշխատում տեղի «Պուտյովկա» թերթում:

Վլադիմիր-Վալենտինը որոշում է հաստատվել Մոսկվայում: 1939 թ. մոր հետ գնում է մայրաքաղաք: Մորը հաջողվում է կեղծ փաստաթղթերով հավաքարարի աշխատանքի անցնել ԽՍՀՄ Գերագույն խորհրդում: Դա հնարավորություն է տալիս հնարամիտ տիկնոջը որդու համար հայթայթել, ավելի ստույգ՝ գողանալ մի քանի կառավարական պարգեւներ: Նա շքանշաններ եւ պարգեւատրման վկայականներ է գողանում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ Միխայիլ Կալինինի աշխատասենյակից: 1941 թ. մորը բռնում են գողուփաստով եւ դատապարտում 5 տարվա բանտարկության: Մինչ այդ նա կարողանում է շքանշանները ձեւակերպել որդու անունով: Զարմանալի է, որ խորհրդային ամենազոր պետական անվտանգության մարմինների աչքից վրիպել էր շքանշանների գողությունը: Հնարավոր է, որ շքանշանների



ВЫПИСКА

токол № 6 , 20 мая 19 40г.

ДАНИЯ ПРЕЗИДИУМА

ХОВНОГО СОВЕТА СССР

Об отмене Указа Президиума Верховного Совета СССР от 21 апреля 1940г. в части присвоения звания Героя Советского Союза ПУРГИНУ В.П.

Дело № 13/606.

Указ Президиума Верховного Совета СССР от 21 апреля 1940г. в части присвоения звания Героя Советского Союза с вручением ордена Ленина и медали "Золотая Звезда" ПУРГИНУ В.П. отменить.

Секретарь Президиума Верховного Совета СССР - (А.Горкин)

պահպանման համար պատասխանատու աշխատակիցները աղմուկ չեն բարձրացրել, որպեսզի իրենք չտուժեն:

Կեղծ փաստաթղթերի եւ գողացված շքանշանների օգնությամբ Գոլուբենկոն աշխատանքի է անցնում հեղինակավոր «Կոմսոմոլսկայա պրավդա»-ում: Նա սիրում էր հասարակության մեջ երեւալ պարգեւներով եւ հայտնել, որ ինքը կապեր ունի անվտանգության մարմիններում: Սակայն երբ նրան հարցնում էին, թե ինչ գործողության համար են նրան պարգեւատրել, հրաժարվում էր պատասխանել:

1939 թ. հուլիսին Գոլուբենկոն խմբագրության կողմից գործուղվում է Հեռավոր Արեւելք, ինչը նրան հնարավորություն է տալիս երրորդ անգամ «պարգեւատրվել» Լենինի շքանշանով՝ իբր ճապոնացիների դեմ Խալխին գոլի մոտ մղված մարտերի ընթացքում վիրավորվելու համար: Ոչ մեկի մոտ կասկած չառաջացրեց այն հանգամանքը, որ պարգեւատրման փաստաթղթերը տրված են 39-րդ հատուկ դիվիզիայի պետի կողմից, մինչդեռ դիվիզիան մարտական գործողությունների ընթացքում գտնվել էր բելոռուսական Գրոդնո քաղաքում: Խաբեբան նույնիսկ կեղծ փաստաթղթերով կարողացավ դառնալ կոմունիստական կուսակցության անդամության թեկնածու:

Գոլուբենկոն որոշում է դառնալ Խորհրդային Միության հերոս: Խորհրդա-ֆիննական պատերազմն էր ընթանում, եւ խաբեբան որոշում է մեկնել ռազմաճակատ՝ որպես զինվորական թղթակից: Ինչպես պարզվեց հետագայում՝ Գոլուբենկոն ոչ մի տեղ էլ չէր գնացել, այլ մի ամբողջ ամիս Մոսկվայում զբաղվել էր հարբեցողությամբ: Որոշ ժամանակ նա իրեն Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհող կեղծ պարգեւատրման թերթիկ ուղարկեց ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ: Թերթիկը, հավանաբար, նրա մոտ էր հայտնվել ձեռներեց մոր շնորհիվ: 1940 թ. ապրիլին Գոլուբենկոյին շնորհվեց ԽՍՀՄ բարձրագույն կոչումը:

Հանցագործի հետագա արկածներին վերջ տվեց սնափառությունը: «Կոմսոմոլսկայա պրավդա»-ում լույս է տեսնում Գոլուբենկոյի վերաբերյալ հոդված՝ լուսանկարով, ինչից ճանաչում են փախստական կալանավորին: Խաբեբան զրկվեց բոլոր պարգեւներից, իսկ 1940 թ. նոյեմբերին գնդակահարվեց:

Պատրաստեց **Ռուբեն ՍԱՀԱԿՅԱՆԸ**

Օպերատիվ

Օրենքը չխախտելու համարձակություն

Պետության հանդեպ մարդկանց վստահությունը, անշուշտ, պայմանավորված է նաեւ ոստիկանության աշխատանքով, ոստիկանի գործողություններով, վարքագծով, հետեւաբար նաեւ նրա հանդեպ վստահությամբ: Ուրեմն, իր մասնագիտական գործառույթներին զուգահեռ, ոստիկանը պարտավոր է նախանձախնդիր լինել, որ յուրաքանչյուր քաղաքացի վստահությամբ եւ հարգանքով վերաբերվի իր դժվար, հաճախ վտանգավոր աշխատանքին, հիշի, որ ոստիկանն այն մարդն է, ում առաջինն է ապավինում փորձության ժամին, ում ներկայությունն է սթափեցնում օրինազանցին, ինքնատիրապետումը կորցրած ստահակին: Ումից, թերեւս, նաեւ ամենաշատն է դժգոհում, բայց նեղության, հուսահատության, փորձության առաջին իսկ պահին հենց նրան դիմում:

Խոստովանենք, վերջին ժամանակների վիճակագրությունը մտահոգիչ է մի շարք գործոններով պայմանավորված համակեցության կանոնները ձեւախեղվել են, արժեհամակարգեր են փոխվել, հասարակության մեջ իրավունքների ու պարտականությունների հանդեպ եսասիրական դրսեւորում կա՝ ապահով ու անվտանգ ապրելն իմ իրավունքն է, այն պաշտպանելը՝ քո պարտականությունը: Հասարակության մի մասի այս պահանջատիրությունը որքան իրավացի, նույնքան եսակենտրոն է. իմը իրավունքներն են, քոնը պարտականությունը: Այդպես չի լինում, այդպիսի բաժանումը պատասխանատվությունից խուսափելու փոքրոգություն է: Քաղաքակիրթ հասարակություն, օրենքի գերակայությունն ունեցող պետություն, եթե դա է բոլորիս գերխնդիրը, բոլորս պետք է ստեղծենք: Մեզնից ամեն մեկը նախ

պետք է օրինապաշտ լինի եւ իրավունքները «սեփականաշնորհելիս» մի փոքր մաս էլ պարտականություններից իրեն վերապահի: Ոչ մի երկրի ոստիկանություն չի կարող կարգուկանոնի, օրենքի բացարձակ երաշխավորը լինել, եթե հասարակության մի հատված օրենքն ու կարգը խախտելով ու ոստիկանությանը փնովելով, չհարգելով է զբաղված: Հասարակությունն այդպես չի առողջանում, օրենքի գերակայությունն այդպես չի լինում, եթե պարտականությունների եւ իրավունքների միակողմանի բաժանում է արվում:

Ինքնամաքրվելու համարձակություն պետք է ունենա ամեն ոք: Որովհետեւ ոչ մի հզոր երկրի ուժեղ ոստիկանությունն էլ չի կարող օրենք ու իրավունք պաշտպանել, եթե հասարակությունը կամ հասարակության մի ստվար մասը ամեն օր օրենք խախտի, մի մասն էլ փարիսեցիություն անի:

Հանցավորության, մարդկային հարաբերությունների խաթարման, արժեհամակարգերի որակափոխման պատճառները մի մեծ շարք են՝ սկսած համակեցության դրսեւորումներից մինչեւ նյութապաշտության ժամանակների պարտադրանքը: Այս իրողության մեջ ամեն օր քննություն են հանձնում մեր մարդկային կարողությունները եւ ունակությունները, մեր իրավունքներն ու պարտականությունները, մեր կամեցողությունն ու չկամությունը, մեր գայթակղություններն ու գիտակցությունը: Քայլերը մենք ենք անում՝ նախապատվությունը տալով մեր խառնվածքում առկա չար կամ բարի ուժերին: Յուրաքանչյուր քայլ մեզ տանում է այնտեղ, դեպի ուր գցում ենք քայլը: Հենց այդ քայլը գցելուց առաջ եթե փորձենք մտածել, ուրեմն մեր իրավունքներն արդեն պաշտպանված են, մեր պարտականությունները՝ կատարված: Ուրեմն, իրավական պետությունն ու քաղաքակիրթ հասարակությունը տեսիլք չեն:

Որքան էլ պարծենանք մեր հազարամյա մշակույթով ու քաղաքակրթությունով, միջնադարում «Դատաստանագիրք» ունենալով, պարտավոր ենք օրենքը հարգել: Պետք է փորձենք այսօր թիկունք լինել ոստիկանին, որովհետեւ իր դժվարին գործում մեր իրավագիտակցությունն ու աջակցությունը ունենալով՝ ավելի դյուրին կլինի հանցավորության դեմ պայքարը, ավելի սահուն կլինի իրավական պետություն դառնալու գործընթացը: Ի վերջո, բոլորիս եւ յուրաքանչյուրիս գերնպատակը նույնն է՝ ուժեղ ու ապահով հայրենիք: Ունենանք օրենքի պաշտպանին հարգելու վճռականություն:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

«Ամրանյութային» պատվաստներ

Շատերն այն կարծիքին են, որ թեթեւ թմրամիջոցները, ինչպես մարիխուանան, ավելի քիչ կախվածություն են առաջացնում: Բայց հաստատված է, որ մարիխուանայի ինչպես չափաբաժնի ավելացումը, այնպես էլ դրանից հրաժարվելը փսիխոզի առաջացման պատճառ է դառնում, ուստի, մարիխուանայի օգտագործումը չի կարող մարդու օրգանիզմի վրա բացասական ազդեցություն չունենալ:

Այսօր աշխարհում ընթանում է մարիխուանայի օրինականացման շարժում, շատ երկրներ արդեն հասել են այն որոշակի չափաքանակով օգտագործելու ապաքրեականացմանը: Արդարացվա՞ծ է արդյոք նման մոտեցումը: Դարկավ ոչ, քանի որ մարիխուանայի օգտագործման դրական եւ բացասական կողմերն ամենեւին համարժեք չեն: Միայն այն, որ երկարատեւ օգտագործման դեպքում մարդու մոտ առաջանում է մոտիվացիայի կորստի համախտանիշ, որին բնորոշ են անտարբերությունը, ցանկությունների, հետաքրքրությունների բացակայությունը, բավական է դրա օգտագործման դեմ պայքարելու համար:

Մարիխուանայից կախվածություն ունեցողին ավելի ծանր թմրամիջոցներից մեկ քայլ է բաժանում: Եվ միանգամայն արդարացված է, որ ոստիկանությունը հետեւողական պայքար է մղում ոչ միայն ծանր, այլեւ թեթեւ թմրամիջոցներ օգտագործողների դեմ:

Ոմանք այն կարծիքին են, որ աննշան քանակության՝ զրո ամբողջ ինչոր գրամի մարիխուանայի հայտնաբերումը առանձնապես հրապարակելու ենթակա հանցադեպ չէ, առավել եւս, որ նման դեպքերում նախատեսված պատիժն էլ վարչական է: Համաձայն ենք վերապահումով. կրկնվող աննշան չափաքանակը չի կարող արդեն նաեւ քրեորեն պատժելի չլինել, մանավանդ որ՝ զրոն, որպես կանոն, ժամանակ անց արդեն ամբողջ թվով է արտահայտվում: Ոստիկանության Տարոնի բաժնում հարուցված քրեական գործով անցնող տղամարդը եւս զրո ամբողջով էր սկսել շփումը մարիխուանային, սակայն տվյալ դեպքում նրա մոտ խուզարկությամբ հայտնաբերվեց 3.38 գրամ տետրահիդրոկաննաբինոլներ պարունակող բուսական խառնուրդ:

Քրեական գործ հարուցվեց նաեւ դիլիջաբնակ տղամարդու դեմ, որը ոչ միայն հավաքել, չորացրել, մանրացրել ու պահել էր 4,66 գրամ մարիխուանան ու անձամբ օգտագործել, այլեւ հյուրասիրել էր ընկերներին: Ասել է թե՝ նպաստել էր դրա տարածմանը:

Ռիտա ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Ապօրինի զենք-զինամթերքի հանձնում

Ոստիկանության տարածքային ստորաբաժանումների ծառայողները շարունակում են ամենօրյա հետեւողական միջոցառումները ապօրինի պահվող զենք-զինամթերքի կամավոր հանձնման ուղղությամբ:

Ոստիկանության Վարդենիսի բաժնի ծառայողների բացատրական աշխատանքի շնորհիվ հունիսի 10-ին բաժին եկավ Գեղարքունիքի մարզի Կուտական գյուղում ապրող 32-ամյա մի տղամարդ եւ կամավոր հանձնեց «Կալաշնիկովի» ինքնաձիգ եւ 7,62 մմ տրամաչափի 23 փամփուշտով լիցքավորված պահեստատուփ: Տղամարդու հայտնածով՝ հրազենը գտել էր տանիքը նորոգելիս եւ անմիջապես բերել էր ոստիկանություն:

Ոստիկանության Արարատի բաժնի անչափահասների գործերով եւ ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքի ծառայողների բացատրական աշխատանքի շնորհիվ՝ հունիսի 11-ին բաժին եկավ Արմաշ գյուղի բակիչ, 37-ամյա մի տղամարդ եւ ոստիկաններին հանձնեց առանց գործարանային համարի ողորկափող հրազեն ու տարբեր տրամաչափի 26 փամփուշտ:

Հունիսի 12-ին էլ ապօրինի պահվող զենք-զինամթերքի կամավոր հանձնման դեպք արձանագրվեց ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Նաիրիի բաժնում: Բաժնի պարեկայինների բացատրական աշխատանքի շնորհիվ Զովունի գյուղից 26-ամյա մի երիտասարդ ոստիկանություն բերեց ողորկափող հրացան եւ ինքնաձիգի 5,45 մմ տրամաչափի 20 փամփուշտ:

Հունիսի 13-ին ոստիկանության Արտաշատի բաժին ահազանգեց Դալար գյուղում ապրող մի տղամարդ ու հայտնեց, որ խորդանոցը մաքրելիս ինքնաձիգ ու փամփուշտներ է գտել: Նշված վայր մեկնած օպերատիվ խումբը պարզեց, որ առանց գործարանային համարի ինքնաձիգը նախատեսված է 5,45 մմ տրամաչափի փամփուշտներ կրակելու համար: Ինքնաձիգից բացի, տղամարդը գտել էր տարբեր տրամաչափի հարյուրից ավելի փամփուշտ:

Միջոցառումները շարունակվում են:

Ապօրինի ծառահատումներ

Հունիսի 12-ի վաղ առավոտյան եւ հունիսի լույս 13-ի գիշերը ոստիկանության Դիլիջանի բաժնի ծառայողները, ապօրինի ծառահատման դեպքեր բացահայտելու եւ ապօրինի ծառահատումները կանխելու նպատակով, շրջագայություն իրականացրին բաժնի սպասարկման տարածքում: Արդյունքում՝ Դիլիջան քաղաքի տարբեր հատվածներում հայտնաբերվեցին փասը տրանսպորտային միջոցներ, որոնք բարձված էին 20 խմ-ից ավելի փայտանյութով:

Վարորդները փայտանյութի օրինականությունը հավաստող փաստաթղթեր չունեին, ուստի նրանց մեքենաները տեղափոխվեցին պահպանվող հատուկ տարածք: Նախնական տվյալներով՝ վարորդները փայտանյութը ձեռք են բերել տարբեր վայրերում եւ հանգամանքներում, որոնց մանրամասները ոստիկանները պարզում են:

Դեպքերի առթիվ ոստիկանության Դիլիջանի բաժնում նյութեր են նախապատրաստվում:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Թմրամիջոց իրանցիների մոտ

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում ապօրինի թմրաշրջանառության վերաբերյալ հերթական տեղեկությունները ստացվեցին: Դրանք իրացնելու ուղղությամբ ձեռնարկվեցին օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ պետեկամուտների մաքսանենգության դեմ պայքարի վարչության եւ ոստիկանության Մեղրիի բաժնի ծառայողների մասնակցությամբ: Արդյունքում՝ հունիսի լույս 12-ի գիշերը Իրանից Հայաստան ժամանած երկու երիտասարդ, Մեղրիի մաքսակետում

ենթարկվեցին մաքսային զննման: Նրանցից մեկի մոտ հայտնաբերվեց 56 գրամ մեթամֆետամին, իսկ մյուսի մոտ՝ մարիխուանա:

Քրեական գործ է հարուցվել:

Հանգամանքները նախաքննությամբ պարզվում են:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Անխոհեմները

Առտնին հարաբերություններում տարակարծությունները նույնիսկ օրինաչափ են. բնական է, երբ ընդհանուր հայտարարի չգալով՝ մարդիկ վիճում են: Անբնականն այն է, որ վեճը մարդկանց տանում է այնպիսի հարթություն, երբ գլորվում են մինչեւ քրեական հանցագործության տիրույթ, ողբերգական հանգուցալուծում: Առճակատման ժամանակ անտեսվում են բանականությունն ու խոհեմությունը, արարքի հետեւանքները պատկերացնելու անհրաժեշտությունը, ու ստիպված ենք պարբերաբար կրկնել նույն պարզ ու կարեւոր ճշմարտությունը՝ հարաբերություններ ճշտելու հազարումի ձեւերից մի՛ ընտրեք վատթարը, մի՛ անտեսեք խոհեմությունն ու հարցեր պարզաբանելու քաղաքակիրթ եղանակը, որպեսզի ողբերգությունը, ցավը, քրեական օրենսգրքին դեմ հանդիման հայտնվելու փաստը չհետապնդեն...

Մարդկային հարաբերություններում առկա մտահոգիչ իրականությունը, հարաբերությունների խաթարման պատճառը հոգեբանները մի ժամանակ «ախտորոշում էին» մի քանի տեսանկյունից: Դրանցից մեկը, օրինակ, շրջանառվում էր տեւական ժամանակ՝ 90-ականների վեց-յոթ տարեկաններն այսօրվա անհանդուրժող, նյարդային ու անհանգիստ երիտասարդներն են, որոնց մանկությունը անցել է դժվար պայմաններում:

Հոգեբանական «ախտորոշումներից» մեկն էլ նոր տնտեսական կացութածեւի՝ շուկայական հարաբերությունների անցումն է. սեփականատիրական չստանդարտացված պատկերացումները դեպի վատը փոխեցին հարաբերությունների որակը. նյութը դարձավ գլխավոր արժեք, շահը՝ առաջնահերթ: Նյութն ու շահը համակեցության որակ փոխեցին:

2019 թ. անցած հինգ ամիսներին ոստիկանության տարբեր ստորաբաժանումներում առողջությանը դիտավորությամբ վնաս պատճառելու ------ դեպք է գրանցվել: Ուրեմն, օրակարգում է սթափվելու կոչը, հորդորը՝ անհանդուրժողականությունը հաճախ ծանր ավարտ է ունենում: Ուրեմն, պետք չէ կյանքը ողբերգություն դարձնել, պետք չէ տեղի-անտեղի աքլորանալ՝ իբր սեփական գերազանցությունն ապացուցելու համար: Այդ սնապարծությունը շարքային հիվանդություն է ընդամենը: Ժողովրդական խոսքով ասած՝ կռվի մեջ փլավ չեն բաժանում, իսկ ցավ, ողբերգություն՝ ինչքան ասես:

Ներկայացնենք վերջին շրջանում արձանագրված մի քանի դեպք:

Ոստիկանության Շենգավիթի բաժին դիմած Մարո Ա.-ն հայտնում էր, որ կենցաղային հարցերի շուրջ վիճաբանության ժամանակ ամուսինը ծեծել եւ մարմնական վնասվածքներ է պատճառել իրեն: Հիսունին մոտ մարդիկ են, համատեղ կյանքի երկար ճանապարհ անցած, բայց արի ու տես, որ սովորական անհամաձայնությունը մարդավարի լուծելուց այնքան էին հեռացել, որ նրանց հարցերով ոստիկանությունում են զբաղվելու:

Ոստիկանության Մաշտոցի բաժին դիմած Մարիամ Վ.-ին էլ վիճաբանության ժամանակ դանակահարել էր նախկին ամուսինը: Անհաշտությունն, ի վերջո, այս ընտանիքին հասցրել էր ամուսնալուծության, բայց Երեմ Ն.-ն «դիրքերը» չէր զիջել. նախկին կինը պետք է միշտ զգար իր բռունցքի, նաեւ՝ դանակի զորությունը:

Բռունցքի զորությունը կնոջն «ապացուցել էր» նաեւ Վարուժան Մ.-ն: Այս երիտասարդն իր «համարձակությունը» եւ «ուժը» ցուցադրել էր աներոջ տանը. զոքանչի աչքի առաջ ծեծել եւ դանակով մարմնական վնասվածք էր պատճառել կնոջը: Դա քիչ համարելով՝ ջարդուփշուր էր արել նրանց պատուհանների ապակիները: Հիմա Վարուժանը «փախած է», համարձակությունը չի բավարարել ներկայանալ ոստիկանություն եւ «տղամարդկային» արարքի համար բացատրություն տալ:

Կենցաղային հարցերի շուրջ վեճը տգեղ ավարտ ունեցավ նաեւ Վաղարշապատի մի ընտանիքում: Ինչ-ինչ հարցերի շուրջ վիճել էին, միմյանց անպատվել, հետո ամուսինը խոսքից «գործի» էր անցել. ծեծել, ապա բահի կոթով խփել էր կնոջ գլխին: Ոստիկանությունն ահազանգել էր նրա հայրը, թե՝ եկեք, որդիս հարսիս սպանում է...

Նոյեմբերի 2-ին ոստիկանության Մալաթիայի բաժին դիմած կինը հայտնել էր, որ ամուսինը դանակով հարձակվել է իր եւ երեխաների վրա: Նրանց բնակարան մեկնած օպերատիվ խումբը պարզեց, որ Ալբերտ Ք.-ն հարբած վիճակում ծեծել է կնոջը՝ պատճառելով մարմնական վնասվածքներ, հետո դանակով սպառնացել է նրան ու «ձեները չկտրող» երեխաներին: Հոր խոսքն «արհամարհած» փոքրիկները շարունակել էին լացուկոծը, կինն էլ տեսնելով, որ ամուսնու սպառնալիքը իրականություն դառնալու միտում ունի, զանգել էր ոստիկանություն:

Գյումրեցի մի ընտանիքում «հայրերորդիներ» հարցը սուր էր դրված: Արդյունքում՝ որդին դանակահարեց 75-ամյա հորը: Ոգելից խմիչք օգտագործած լինելը «մեղմացուցիչ» հանգամանք չէր. երախտամոռ ու անպատկառ լինելը, ծնողին չհարգելը տեսակի հարց է. խմիչքը պարզապես օգնում է դրանց ազատություն տալուն:

Հունիսի 10-ին ոստիկանության Կենտրոնական բաժին հաղորդում էր ստացվել, որ Վրացյան փողոցում մի տղամարդ դանակահարել է կնոջը: Դեպքի վայր մեկնած ոստիկանները պարզեցին, որ 56-ամյա տղամարդը կենցաղային հարցերի շուրջ փողոցում վիճաբանել է իր կնոջ հետ, ապա դանակով խփել նրա գլխին: Կինը մարմնական ծանր վնասվածքներով տեղափոխվեց հիվանդանոց, ամուսինը՝ ոստիկանություն:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Հայտնաբերվել են հետախուզվողներ

Հունիսի 14-ին ոստիկանության Նոյեմբերյանի բաժնի ծառայողները Բագրատաշենի սահմանապահ վերահսկողության բաժնից ոստիկանության Բագրատաշենի բաժանմունք բերման են ենթարկել Վրաստանի քաղաքացի Նիկոլայ Մ.-ին, որը 2009 թ. հոկտեմբերից յուրացման կամ վատնման մեղադրանքով հետախուզվում էր Մոլդովայի Հանրապետության իրավապահների կողմից:

◆

Ոստիկանության Մեղրիի բաժնի քրեական հետախույզները, ՌԴ զորամասերից մեկի ծառայողների աջակցությամբ, հունիսի 14-ին Մեղրիի սահմանային անցակետի հարակից տարածքից բերման են ենթարկել Իրանի քաղաքացի Սայիդ Կ.-ին, որը ոստիկանության Էրեբունու բաժնի կողմից հետախուզվում էր ՀՀ քրեական օրենսգրքի 266 հոդվածի մեղադրանքով:

◆

Հունիսի 15-ին ոստիկանության ՔՀԳՎ եւ ՀՀ-ում Ինտերպոլի ԱԿԲ-ի ծառայողները համատեղ միջոցառումներով հայտնաբերել եւ Փարիզ-Երեւան չվերթով Հայաստան են տեղափոխել Երեւանի բնակիչ Լեւոն Խ.-ին, որը 2015 թ. ապրիլից ոստիկանության Մաշտոցի բաժնի կողմից հետախուզվում էր ՀՀ քրեական օրենսգրքի 266 հոդվածի մեղադրանքով:

◆

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ՔՀԲ 6-րդ բաժանմունքի ծառայողները, օպերատիվ տվյալներն իրացնելով, Տերյան եւ Թումանյան փողոցների խաչմերուկից բերման են ենթարկել Քաջազնունու փողոցի բնակիչ Ռոբերտ Վ.-ին, որը հետախուզվում էր գողության մեղադրանքով:

◆

Ոստիկանության Արմավիրի բաժնի եւ Արցախի Հանրապետության Մարտունու բաժնի քրեական հետախույզների համատեղ ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ հունիսի 13-ին ԱՀ Մարտունու շրջանի Կարմիր շուկա գյուղից ոստիկանության Մարտունու բաժին բերման է ենթարկվել Սարգիս Մ.-ն, որը հետախուզվում էր ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի (գողությունը) մեղադրանքով:

◆

ՀՀ-ում ոստիկանության Ինտերպոլի ԱԿԲ-ի եւ ոստիկանության Մուշի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական եւ բացատրական աշխատանքների շնորհիվ հունիսի 14-ին ոստիկանության Մուշի բաժին է ներկայացել Գյումրիի բնակիչ Տիգրան Ն.-ն, որը 2018 թ. մայիսից ՌԴ իրավապահների կողմից հետախուզվում էր ծանր մարմնական վնասվածք պատճառելու մեղադրանքով:

◆

Հունիսի 15-ին ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ Երեւան-Կրասնոդար չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո գծային բաժին բերման է ենթարկվել ՌԴ քաղաքացի Նորայր Ու.-ն, որը հետախուզվում էր Մինսկ քաղաքի իրավապահ մարմինների կողմից Բելառուսի Հանրապետության քրեական օրենսգրքի 211 հոդվածի (անձի կողմից գույքի հանձնելը կամ հափշտակելը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության Մուշի բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ հունիսի 16-ին Արմավիր քաղաքի Շինարարների փողոցից ոստիկանության Մուշի բաժին բերման է ենթարկվել Դավիթ Մ.-ն, որը հետախուզվում էր ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի (գողությունը) մեղադրանքով:

Կասկածյալը հայտնաբերվեց

Հունիսի 4-ին ոստիկանության Երեւան քաղաքի վարչության օպերատիվ կառավարման կենտրոնից ոստիկանության Արաբկիրի բաժին հաղորդում է ստացվել, որ մայրաքաղաքի Դեմիրճյան փողոցում կայանված մի մեքենայից գողություն է կատարվել: Անհայտ անձը կամ անձինք կոտրել էին «Լեքսուս» մակնիշի ավտոմեքենայի կողային ապակին եւ սրահից գողացել նոթբուք ու թանկարժեք խմիչք:

Հանցագործությունը թարմ հետքերով բացահայտելու նպատակով Արաբկիրի քրեական հետախույզներին միացան ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի ծառայողները: Համատեղ միջոցառումների արդյունքում հանցագործությունը բացահայտվեց կարճ ժամանակում: Դեպքի հաջորդ օրը ոստիկանների տեսադաշտում հայտնվեց Ներքին Չարբախում ապրող 40-ամյա մի տղամարդ, որը նույն օրը հայտնաբերվեց եւ կասկածանքով բերման ենթարկվեց ոստիկանության Արաբկիրի բաժին: Բերման ենթարկվածը խոստովանական բացատրություն է տվել: Հետագա միջոցառումներով հայտնաբերվել է նաեւ գողացված համակարգիչը:

Կատարվում է քննություն:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Բռնվեց դեպքի վայրում

Հունիսի լույս 3-ի գիշերը ոստիկանության Վարդենիսի բաժին ահազանգած տղամարդը հայտնում էր, որ իր բարեկամի մթերային խանութ գող է մտել:

Խանութը Լուսակունք գյուղում էր: Բաժնի հերթապահ օպերատիվ խումբը արագ արձագանքեց: Արագ գործելուց բացի, պետք էր գործել նաեւ զգուշավոր՝ գողին դեպքի վայրում բռնելու համար: Այդպես էլ եղավ. ահազանգից քիչ անց Վարդենիսի ոստիկանները 37-ամյա տղամարդուն խանութից բերման ենթարկեցին բաժին:

Պարզվեց՝ կասկածյալը գողության մեղադրանքով նախկինում դատապարտվել էր:

Տուժողը հրավիրվեց բաժին ու հաղորդում տվեց: Ըստ նրա՝ նկատել էին, որ խանութի ապակին կոտրված է, դռան կողպեքը՝ չկա, ներսում էլ մարդ կա: Հասկացել էին՝ ինչ է կատարվում եւ անմիջապես ահազանգել էին ոստիկանություն՝ միջոցներ ձեռնարկելով, որ գողը չփախչի:

Քրեական գործ է հարուցվել: Կատարվում է նախաքննություն:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:



Նշանավոր շախմատիստ ու երգահան
Բանջարանոցի պտուղ
Փոքր արկղ / Չկան մաշկի վրա
Մրցաշարի մաս / Զինվ. կոչում
... Քոչարյան / ... Բրել
Քիմիական տարր
... Կոբո / Կեչազգի ծառ
Մետաղ
Լհասա / Քվանտ, գեներատոր
Երամ
Ֆրանս. ֆիզիկոսներ՝ հայրը, որդին թոռը
«Նաուտիլուս» / Հովհաննես ...
Ուսումն. հաստատութ. / «Բաղնիքդ անուշ», դեր.
Հուն. դից. հերոս / Զուռնա
Գյուղ / Սմքած խաղող
Յութա, Օրեգոն / Քաղաք, Ֆրանսիա
Բարձրաստիճան զինվորական
Գերման. ճարտարագետ
Կամարաձեւ գիծ / Սմքած ծիրան
Մոլորակ
Աստվածաշնչյան կերպար
Մարմնի մաս
Ազգանուն
Պարան / Իշխան, տառեխ
Լավագույնը որոշելու հատկանիշ
Իտալացի նկարիչ
Անապատ, Չիլի
Ծառատեսակ
Պատմ. Հայաստանի մայրաքաղաք
✞ / Ռուս կինոդերասան
Ֆիզիկոս, Պակիստան / ... Լատինինա
Ավարառու անձ
Բաբելոնյան աստված / Գիտություն
Մենդելսոն, սիմֆոնիա / Լուսին ...
Մեքսիկ. հեղափոխութ. առաջնորդ
Կշռի հին միավոր / Լիճ, Ղազախստան
... Քաչա
Ամանի ծածկոց / Կարատե
«Ռուսական կայսրության ...ը»
Վարչ. միավոր, Հին Եգիպտոս
Ռուս զինագործ
Գրելանյութ / Երկանդամ
Քիչ / Քաղաքատիպ ավան, ՀՀ
«... Չուդրա» / Արտույտ, դեղձանիկ
Քերական. կարգ
Ռոբերտ դե ... / Հնագիտ. աշխատանք
Ֆրանսիացի գրող
Աշակերտ / Գավառ, Մեծ Հայք
Կուպիդոն
Հնդընկույզ / Օգուտ / Ներկա է
Նեղքիթ կապիկ
... կոլա
Ոսկրերի շարժուն միացություն
Երկարավիզ սափոր
Հայկական տառ
Թալանված ապրանք
Ոդիսեւսի հայրենի կղզին
Հնդկաց. ժողովուրդ
Թշնամի
Գետերի հավերժահարս
Բենի ...
Շվեյցար. քաղաք
Գեղեցիկ միջատ
Երաժշտ. երկ / Ագի
Սննդամթերք / Էդգար ...
Գրական ժանր / Դերանուն
Զինվորների շարք
Խոսքի մաս / Բարիտոն
Ուտելիք / Հայկ. աստվածուհի
Երկրակյաց բույս
... Բերինգ
Քրեական գործի քննություն

Ուշադրություն

Հարգելի քաղաքացիներ՝

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Աստղագուշակ

21.06 - 27.06

Խոյ - Կարող եք լուծում տալ կարեւոր հարցերի: Գործնական հանդիպումները վատ չեն անցնի:

Ցուլ - Հնարավոր է հաջողությունների հասնեք մասնագիտական ոլորտում: Կկարողանաք լուծել Ձեր առաջ դրված խնդիրները:

Երկվորյակ - Չի բացառվում, որ ստիպված լինեք զբաղվել ոչ այնքան հաճելի գործերով: Հնարավոր են չնախատեսված ծախսեր:

Խեցգետին - Այս շաբաթ պետք է զգույշ գործել: Խորհուրդ չի տրվում նոր գործ սկսել, հույսը դրեք սեփական ուժերի վրա:

Առյուծ - Հիանալի շաբաթ է հանդիպումների, գործնական համաձայնությունների համար: Ոչ միայն արագ լեզու կգտնեք, այլեւ կզարմացնեք ղեկավարությանը:

Կույս - Մասնագիտական տեսանկյունից այնքան էլ բարենպաստ շաբաթ չէ, հնարավոր է տհաճ խոսակցություններ ունենաք:

Կշեռք - Նպատակասլացությունը թույլ կտա հասնել լուրջ հաջողությունների, իսկ անհաջողությունները չեն հուսահատեցնի:

Կարիճ - Հաճախ այնպես չեք վարվում, ինչպես սպասում են ձեզանից, դա կարող է մոլորության մեջ գցել հակառակորդներին:

Աղեղնավոր - Ցանկալի է պահպանել հանգստություն: Խուսափեք չնախատեսված ծախսերից:

Այծեղջյուր - Կկարողանաք ցույց տալ Ձեր իրական հնարավորությունները: Չեն բացառվում հաջողություններ գործնական ասպարեզում:

Ջրհոս - Խորհուրդ չի տրվում կարեւոր հանդիպումներ ունենալ: Կարող եք լուծում տալ անձնական խնդիրներին:

Ձուկ - Ձեզ ավելի հանգիստ կզգաք: Չի բացառվում գործնական հարաբերությունները վերածվեն անձնականի:

Փորձեք լուծել

Խնդիր N1



Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

Խնդիր N2



Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

Նախորդ խնդիրների պատասխանները

Խնդիր N1 1. f2-g3 a5:e5 2. f4:a3x

Խնդիր N2 1. a3-b4 a5:e5 2. g7:a7 g1:d4 3. a7:d8 x

Պատրաստեց
Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ
Շաշկու Հայաստանի չեմպիոն, IDF վարպետ, սպորտի վարպետ

Նախորդ համարի սկանվորդի պատասխանները



«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աթաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 13.06.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: